



# ՇՈՒՀԱՆԻԿ ԿՈՒՐՊԻՆՅԱՆ

## Նամակ Հովհաննես Մալխասյանին

23 հունվարի, 1907 թ .

Ռոստով-Դոն

Հարգելի պ. Հովհ . Մալխասյան .

Ուրախ եմ թերթիդ հաշտովելուն: Ցանկանում եմ ուժ և տոկունություն այդ վսեմ ասպարեզում՝ որը հանդիսանալու է մի բուռն կեղծված և հարստահարված թշվառների <համար> որպես մի ստավոր փարոս, որպես գաղափարական նեցուկ:

Որպես բարեկամ, թույլ եմ տալիս ինձ Ձեզ խորհուրդ տալու, որ թերթը այնպիսի հիմքերի վրա դնեք, որ չլինի «ոտքերը-կապած, ձեռքերը-շղթա . . .»: Կյանքի և մտքի այժմյան տեմպերամենտի պահանջները լա՛յն են . . . ազա՛տ, ընբոստ . . . ուստի քիչ թե շատ, այսպես թե այնպես նորածին թերթը պիտի ձևվի նրանց չափերին համեմատ, հարմար:

Խուսափեցեք նեղ, սահմանափակ տենչերից, շատ լոգունգների հետ, որոնք Ձեր սրտին մոտ են, դրեք և այս «Пусть будут все живущие существа свободны от страданий . . .»:

Վերջապես քաջ եղեք, հառաջ տարեք առանց վհատվելու խոչընդոտներից:

Հարգանք՝

Շուշանիկ Կուրպինյան